ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1961 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

ԴԻՄՈՒՄԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Թանկագին ընկերնե՛ր։

Հունիսի 12-—14-ը տեղի ունեցած գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությունը քննարկեց երկրում գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման, գիտական աշխատանքների պլանավորման ու կոորդինացման բարելավման կարևորագույն հարցերը։

Սովետական գիտությունն ու տեխնիկան հիանալի հաջողությունների են հասել։ Գիտության աշխատողները ամբողջ ժողովրդի հետ միասին անձնվիրաբար աշխատում են ի բարօրություն Հայրենիքի, արժանավայել ավանդ են մտցնում ՍՍՌՄ-ում կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

Անօրինակ գիտական սխրագործություն կատարեցին գիտնականները, ինժեներները, տեխնիկները և բանվորները, որոնք ստեղծեցին «Վոստոկ» տիեզերական արբանյականավը, որով սովետական տիեզերագնաց օդաչու Յուրի Գագարինը առաջին անգամ թափանցեց տիեզերքի տարածությունները, թռչելով մեր մոլորակի շուրջը։ Դրանով իսկ մարդկության պատմության մեջ գրված է նոր փայլուն էջ։ «Այդ սխրագործությունը,— նշում է Ն. Ս. Խրուշչովը,— նշանավորում է մեր երկրի նոր թռիչքը՝ դեպի կոմունիզմ նրա առաջընթաց շարժման մեջ»։

Տիեզերքի նվաճման գործում մեր ձեռք բերած հաջողությունները վառ կերպով վկայում են հայրենական գիտության ու տեխնիկայի շատ ճյուղերի՝ մաթեմատիկայի ու մեխանիկայի, ֆիզիկայի ու ռադիոէլեկտրոնիկայի, ավտոմատիկայի ու հեռուստամեխանիկայի, քիմիայի ու մետալուրգիայի, կենսաբանության ու բժշկագիտության զարգացման բարձր մակարդակը։

Սովետական գիտության փայլուն հաղթանակը միանգամայն օրինաչափ է. սոցիալիստական հասարակարգը ամենաբարենպաստ պայմաններն ստեղծեց ժողովրդի ձիրքերի ծաղկման համար։ Կոմունիստական պարտիան գիտնականներին ստեղծագործ աշխատանքի ոգեշնչեց, նրանց զինեց մարքս-լենինյան տեսությամբ՝ ամենաառաջավոր գիտական գաղափարներով, շրջապատեց համաժողովրդական ուշադրությամբ։

Ռուսաստանում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո արտադրության և գիտության կապը դարձավ Սովետական պետության արտադրողական ուժերի հաջող զարգացման անհրաժեշտ պայմանը։ Գիտության հիման վրա ստեղծվում և կենսագործվում էին երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման մեծ պլանները։

Վ. Ի. Լենինը հանճարեղորեն նախատեսեց և կանխագուշակեց սովետական գիտության գալիք վիթխարի նվաճումները, որոնք այժմ իրողություն են դարձել։

Այժմ, երբ մեր պետությունը թևակոխել է կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, գիտությունը հասել է այնպիսի բնագծերի, որոնց առջև բացվում են շեշտակի առաջընթացի վիթխարի նոր հնարավորություններ։ Հսկայական և գրավիչ հեռանկարներ է բերում իր հետ էներգետիկայի ու ավտոմատիկայի զարգացումը, ստեղծվում են առաջադրված հատկություններ ունեցող նոր նյութեր, շատ բան է արվում բնության հետազոտության և վերափոխման, նրա հարստությունների կոմպլեքսային օգտագործման բնագավառում։

Արդի պայմաններում շեշտակիորեն աճում է գիտության դերը։ Երկիրը գիտնականներից սպասում է է՛լ ավելի ակտիվ կերպով մասնակցել արդյունաբերության տեխնիկական առաջադիմության արագացման և գյուղատնտեսության համակողմանի վերելքի գործին։ Անհրաժեշտ է ժողովրդական տնտեսության մեջ ավելի լայնորեն կիրառել ֆիզիկայի, քիմիայի, ռադիոէլեկտրոնիկայի, հաշվողական տեխնիկայի, ավտոմատիկայի ու գիտության և տեխնիկայի մյուս ճյուղերի նորագույն նվաճումները, ըստ ամենայնի բարձրացնել սոցիալիստական արտադրության տնտեսական արդյունավետությունը։

Այս ամենը պահանջում է ավելի լավ կազմակերպել գիտնականների աշխատանքը գիտահետազոտական ինստիտուտներում, կոնստրուկտորական բյուրոներում, գործարանային լաբորատորիաներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, վերացնել այդ գործում եղած թերությունները, պայմաններ ստեղծել գիտության հնարավորություններն է՛լ ավելի արագորեն ու լրիվ օգտագործելու համար։

Գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությունը միահամուռ կերպով հավանություն է տալիս ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ ընկեր Ն. Ս. Խրուշչովի նախաձեռնությամբ ընդունված որոշմանը «Երկրում գիտահետազոտական աշխատանքների կոորդինացումը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գործունեությունը բարելավելու միջոցառումների մասին»։

Գիտնականները դրանում տեսնում են գիտության զարգացման, գիտական հետազոտությունների կազմակերպումը կատարելագործելու, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ գիտության կապը ամրապնդելու նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարության նոր դրսևորումը։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի ստեղծումը մեծ նշանակություն ունի գիտության զարգացման և ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումները ավելի լավ օգտագործելու համար։ Գիտական հիմնարկների գործունեության կենտրոնացումը գիտության վճռական տեղամասերում, զուգահեռականության, գերատեսչական ու տեղային տենդենցների հաղթահարումը գիտական հիմնարկների աշխատանքում, անտարակույս, է՛լ ավելի կբարձրացնեն գիտական աշխատանքի մակարդակը, բարենպաստ պայմաններ կստեղծեն գիտական հետազոտությունների արդյունքները ամենաարագ կերպով արտադրության մեջ օգտագործելու համար։

Գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությունը կոչով դիմում է գիտության ու տեխնիկայի բոլոր աշխատողներին՝ իրենց աշխատանքը էլ ավելի սերտորեն կապել կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ, ապահովել, որ սովետական գիտությունը նվաճի աշխարհում առաջին տեղը մարդկային գիտելիքների բոլոր վճռական բնագավառներում։

Գիտնականների կարևորագույն խնդիրն է ջանքերը կենտրոնացնել գիտության հեռանկարային այն պրոբլեմների մշակման վրա, որոնք նպաստում են երկրի էկոնոմիկայի ու կուլտուրայի վերելքին, զարգացնել պրակտիկայի ուղին լուսավորող տեսական հետազոտությունները։

Երկիրը սովետական գիտնականներից սպասում է համարձակորեն կատարել նոր հետազոտություններ ու հայտնագործություններ ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, քիմիայի, երկրի ու տիեզերքի վերաբերյալ գիտության, կենսաբանության, հասարակական գիտությունների բնագավառում, որոնք հարստացնում են մեր գիտելիքները, լայն հեռանկարներ են բացում տեխնիկական առաջադիմության ու կուլտուրայի ծաղկման համար։ Դրանում առաջատար դերը պատկանում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիային։

Գիտնականները արտադրության աշխատողների համագործակցությամբ պետք է իրենց ստեղծագործական ջանքերը գործադրեն, որպեսզի գտնեն էներգիայի, հանքային և օրգանական հումքի նոր աղբյուրներ և կոմպլեքսորեն օգտագործեն դրանք, ստեղծեն և ժողովրդական տնտեսության մեջ արմատավորեն՝ առաջադիմական տեխնոլոգիական պրոցեսներ, արտադրության կազմակերպման ավելի կատարյալ ձևեր, նոր նյութեր, հատուկ հատկություններով մետաղներ և աշխարհում լավագույն մեքենաները, մեխանիզմներն ու սարքերը՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման համար։

Գյուղատնտեսության հետագա անշեղ վերելքը համաժողովրդական գործ է։ Գիտնականները պարտավոր են իրենց հետազոտություններով նպաստել գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվության վերելքին և անասնապահության մթերատվության բարձրացմանը։ Գիտնականները պետք է գտնվեն սննդամթերքների ու ժողովրդական սպառման առարկաների առատություն ստեղծելու համար մղվող պայքարի առաջավոր դիրքերում։

Մեծ են և վսեմ գիտնականների խնդիրները, որ կոչված են աշխատելու մարդու կյանքը երկարացնելու պրոբլեմի վրա, պայքարելու վարակիչ և այլ հիվանդությունների դեմ։

Կոմունիզմի կառուցումը պահանջում է հասարակական գիտությունների հետագա ստեղծագործական զարգացում, որոնց կարևորագույն խնդիրներն են՝ մշակել կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և դրա հիման վրա կոմունիստական հարաբերությունների զարգացման տեսական հարցերը և ձևավորել ապագա կոմունիստական հասարակության մարդուն։ Մեծ խնդիրներ են ծառացած սովետական տնտեսագետների առջև սոցիալիստական էկոնոմիկայի՝ կոմունիստականի վերաճման օրինաչափությունները սահմանելու գործում, նյութական ռեսուրսները, գիտության և տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ արդյունավետ կերպով օգտագործելու հարցերի մշակման գործում։

Առաջնակարգ նշանակություն ունի համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման հիմնական օրինաչափությունների, միջազգային բան-

վորական և կոմունիստական շարժման, ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, անկախության ուղին թևակոխած երկրների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման պրոբլեմների մշակումը։

Սովետական գիտնականների պարտքն է հետևողականորեն մերկացնել արդի ռեակցիոն բուրժուական փիլիսոփայության, սոցիոլոգիայի և ռևիզիոնիզմի կողմից սոցիալիստական պետության հասարակական զարգացման, բնույթի, դասակարգերի և դասակարգային պայքարի պրոբլեմների կեղծումը։

Կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակշրջանում առանձնահատուկ նշանակություն է ստանում գիտական և ինժեներա-տեխնիկական այնպիսի կադրերի պատրաստումը, որոնք ընդունակ լինեն էլ ավելի զարգացնելու գիտությունն ու տեխնիկան։ Այդ կարևոր գործում գիտահետազոտական ինստիտուտները և բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է զգալիորեն ուժեղացնեն իրենց ուշադրությունը գիտական և ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստման ու աճի հարցերի նկատմամբ, ավելի լայնորեն գիտական աշխատանքում ներգրավելով ընդունակ երիտասարդ մասնագետներին։

Գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությունը երկրի բոլոր գիտնականներին կոչ է անում կոմունիստական շինարարության հոյակապ ծրագրի կենսագործման նվիրաբերել իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները, եռանդն ու տաղանդը, ՍՄԿՊ XXII համագումարը դիմավորել գիտության մեջ նոր ակնառու հաջողություններով։

Սովետական գիտնականները երջանիկ են, որ ապրում և աշխատում են կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ դարաշրջանում, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հաղթանակի դարաշրջանում։

Կեցցե՛ն Սովետական Միության Կոմունիստական պարտիան և նրա Լենինյան Կենտրոնական Կոմիտեն։

Կեցցե՛ Սովետական կառավարությունը։

Փա՜ռք կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդին։